



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

4 դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Գյուլումյանի

Քննության առնելով Մարգար Սիմոնյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Մարգար Սիմոնյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը՝ Սահմանադրական դատարան մուտքագրվել է 2019 թվականի նոյեմբերի 27-ին) խնդրելով. «1. Թիվ ԱՐԱԴ/0188/02/13 քաղաքացիական գործով Մարգար Սիմոնյանի նկատմամբ կիրառված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի դրույ-

թին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից տրված մեկնաբանությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 3-ին մասին և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Ճանաչել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներին հակասող ձևով վավերացված ժառանգության իրավունքի վկայագրի պատճենի օգտագործումը թիվ ԱՐԱԴ/0188/02/13 քաղաքացիական գործով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասին և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1265 որոշման մեջ ամրագրված, ինչպես նաև նույն դրույթի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները՝ դիմողը փաստարկում է, որ «Տվյալ պարագայում... ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի պահանջներին դատարանների կողմից տրվել են ՀՀ Սահմանադրական, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանների կողմից՝ նշված դրույթին տրված մեկնաբանություններին հակասող մեկնաբանություն...»: Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հայցային վաղեմության ընթացքը ընդհատելու իրավակարգավորումները և դրանց իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը համադրելով մեջբերված դատական որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ հանգում է այն եզրակացության, որ հիշյալ նորմը չի բխում Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի իրավական որոշակիության պահանջից:

Ըստ դիմողի՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը նյութական և ընթացակարգային կանոններ պարունակող 49-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ իրավունքի սուբյեկտի համար ստեղծվել է անորոշ իրավիճակ՝ կապված նոտարական կարգով վավերացված փաստաթղթի պատճենի լիարժեք ապացուցողական ուժի հետ:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Դրանց սահմանումն ինքնանպատակ չէ և միտված է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

Վերոհիշյալ սահմանադրական նորմն ամրագրված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտման պատճառ է համարում այն, որ **դատարաններն անտեսել են**, ի թիվս այլնի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1265 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ի խախտումն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջների՝ ժառանգության իրավունքի վկայագրի պատճենը **համարել են թույլատրելի ապացույց**:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի 2016 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1265 որոշումը, որի եզրափակիչ մասի 1-ին կետի համաձայն՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում, եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում: Քանի որ Մարգար Սիմոնյանի դիմումում առաջադրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի 2016 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1265 որոշումը, ուստի այդ մասով անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի ենթադրյալ սահմանադրականության հարցին, որի շրջանակներում դիմողը խնդրել է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ժառանգության իրավունքի վկայագրի պատճենի օգտագործումը, ապա նման հարցի քննությունը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է նաև, որ դիմողը, ձևականորեն բարձրացնելով նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության

հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներից, իսկ վերջինս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը նույնպես մերժելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 1-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Մարգար Սիմոնյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝



4 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-65